Բազմաթիւ արծաթէ և թարմ ծաղկանց պսակներ զարդարում էին հանգուցեալի դիակառքը։ Հանգուցեալը թաղուեց Խօջիվանքի գերեզմանատանը իւր ամուսնու կողքին։

Յաւիտենական հանգիստ ազնիւ գործչի ոսկրներին։

ՂՈՒԿԱՍԵԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՐԱԶԽՈՒԹԻՒՆ

«Լումայի անցեալ համարներից յայտնի է մեր ընթերցողներին, որ պ. Աւետիս Ղուկասեանը, որը յայտնի է իւր զանազան բարեգործութիւններով և իւր ծախքով կառուցել է Թիֆլիզի Վանաց ս. եկեղեցու գաւթում եկեղեցական—պատմական թանգարանի համար մի շինութիւն, գրաւոր յայտնել էր Ազգիս Վեհափառ Կաթուղիկոսին հաստատել մի մնայուն վարչութիւն թանգարանի համար, որին իւր կտակով յանձնելու է մի քանի բարենպատակ և կարևոր կարգադրութիւններ։

Ցանկալով թանգարանի բացումը նշանաւորել մի որ և է արժանայիշատակ գործով, պ. Ղուկասեանը այդ կարևոր կարգադրութիւններից մէկը իրեն յատուկ պատրաստակամութեամբ որոշեց գործադրել այժմէն իսկ և այդ մասին տարւոյս յունիսի 6-ին հետևեալ պաշտօնական յայտարարութիւնը ներկայացրեց Հայաստանեայց Եկեղեցու Նուիրապետին.

«Այն յայտարարութեան մէջ, որ ես մատուցի Վեհ.
« հափառութեանդ իմ կառուցած եկեղեցական թան-
« գարանի համար մշտական վարչութիւն նշանակելու,
« լիշել էի որ ես իմ կտակով յանձնելու եմ այդ վար-
« չութեան մի քանի այլ բարենպատակ կարգադրու-
« թիւններ ի կատար ածելու։

« Այդ կարգադրութիւններից մէկն էլ այն է, որ

« կտակիս մէջ նշանակել եմ տասն հազար ռուբլի իբ-
« րև անձեռնմխելի գումար, որի տոկոսիքը իւրաքան-
« չիւր տարի պիտի յատկացնուի հայերէն լուսաւոր-
« երկասիրութեանց իբրև մրցանակ։ Կտակս պիտի կա-
« տարուի իմ մահից յետոյ։

« Արդ՝ ցանկալով իմ կառուցած թանգարանիս բա-
« ցումը նշանաւորել որեւէ արժանայիշատակ գործով,
« ես որոշեցի կտակիս այդ կէտի կատարումը սկսել նոյն
« իսկ այժմէնից և տարէցտարի 500 ռուբլի ներկա-
« յացնել վարչութեան այդ նպատակով։

« Այս մասին ես գրաւոր հաղորդեցի թանգարանի
« վարչութեան և խնդրեցի խմբագրել պատշաճաւոր
« կանոնադրութիւն մրցանակաբաշխութեան վերաբե-
« րեալ և ստանալով Ձերդ Սրբութեան հաստատու-
« թիւնը՝ գործի ձեռնարկել։

« Իմ այս նոր նուիրաբերութեան մասին պարտք
« եմ համարում յարգոյաբար զեկուցանել Ձերդ Վեհա-
« փառութեան»։

Թանգարանի վարչութիւնը ստանալով գրութիւն
այս մասին՝ փութաց յայտնել պատուական բարերարին
իւր յատուկ շնորհակալութիւնը և ձեռնարկել մրցանա-
կաբաշխութեան վերաբերեալ կանոնագրութեան մշակ-
մանը։

«Լումայ»ի խմբագրութիւնը առաջինը բաղդ ունի
յայտնել այս մասին հասարակութեան և շնորհաւորել
հայ գրագէտներին գրականութեան դիւրութիւն ընծա-
յող այս նոր օժանդակութեան համար։

ՄԻ ՌԱՑՍՏՐՈՒԹԻՒՆ

1896 թուականից, «Լումայ»ի հրատարակութեան
հետ միատեղ սկսելով հրատարակել հայ նշանաւոր գոր-